

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Խառնիչ կրօնական մեծագույն հրատարակչատուններն՝ Պրեշիանի «*Քուէրինիանա*», այս վերջին տարիներու ընթացքին, սկսաւ հրատարակել մեկնութիւններու շարք մը՝ Լատին ծիսական նոր կարգաւորութեան Ս. Գրային ընթերցումներուն: Շարքին ք. 67 հատորը, լոյս տեսած 1976ի Ապրիլին, նուիրուած է խաղաղութեան եւ ֆրիստոնեաներու միութեան վերաբերեալ ծիսակատարութիւններու ընթերցումներուն մեկնաբանութեան, որուն մասնակցած են ֆրիստոնէական զանազան յարանուանութիւններէ մասնագէտներ: Բացատրութիւնները կը բաղկանան՝ մեկնողաբանական (*exégétique*) եւ աստուածաբանական երկու մասերէ: Քրիստոնեաներու միութեան վերաբերեալ երկու ընթերցումներու (Եփես. Դ, 30 - Ե, 2. Յովհ. Է, 11-19) աստուածաբանական մեկնութիւնը կատարած է Հ. Լեւոն Զէֆիան [տե՛ս PAF (*La parola per l'assemblea festiva*) N° 67, *Per l'unità dei cristiani e per la pace*, ed. italiana, dir. da M. MASINI, Queriniana - Brescia, 1976, էջ 223-229, 337-344]:

Ստորեւ կը ներկայացնենք այդ երկու մեկնութիւններուն հայերէնի վերածումը, կատարուած Հեղինակէն, խորհելով թէ գեղեցիկ գուգադիպութիւն մըն է անշուշտ Միփաբեան վարդապետի մը մասնակցութիւնը՝ համամիութեանական մամն ձեռնարկի մը, որ կը հանդիպի ծննդեան երեքհարիւրամեայ յօրելեանին Մեծն Միփաբի՝ որ մեր Հայ իրականութեան մէջ, ինչպէս Հռոմէական իշխանութիւններու առջեւ, համամիութեանական ռզիին աւելի քան հեռատես՝ մարգարէշունչ պատգամատուն եղաւ :

«ԱՄԵՆԱՅՆ ԴԱՌՆՈՒԹԻՒՆ... ԲԱՐՁՑԻ Ի ՁԷՆՁ»

(bfbU., 7, 30)

Առաքելաին հրաւերը՝ ուղղուած Եփեսոսի քրիստոնեաներուն՝ վտարելու իրենց մէջէն ամէն դատնութիւն, գայրոյթ, գոռում գոչում եւ չարախօսութիւն՝ ամէն տեսակ չարութիւնով միասին (հմ. 30),

եւ ընդհակառակն ըլլալու իրարու հանդէպ՝ բարեգութ եւ կարեկից, փոխադարձաբար ներելով իրարու, ինչպէս Աստուած ալ Քրիստոսի մէջ ներեց իրենց, համամիութենական շարժումին մէջ կը գտնէ գործադրութեան շատ յարմար եւ օգտաշատ դաշտ մը: Արդարեւ, եթէ կարելի ըլլար հասնիլ Եկեղեցիներու միութեան՝ իբր արդիւնքը լոկ տեսական հետազոտութեան մը, համաձայնութեան մը պատահականութիւնը պիտի պարզէր, անկասկած, շատ աւելի խրախուսիչ հեռանկար մը: Մինչդեռ, գործնականին մէջ, կը գտնենք մեր դիմաց մթերուած կոյտ մը՝ հոգեբանական, ընկերաբանական, տնտեսական, ազգային, պատմական ու մշակութային ազդեակներու՝ որոնք կը պայմանաւորեն միութեան իրականացումը: Դիւրին չէ, նոյնիսկ ամէնէն հաւասարակշիռ միտքերուն համար, հարցը վերացնել՝ չորս, ինը, տասը, տասնհինգ դարերու բացած վիհէն՝ դառնութիւններու, յուսախաբութիւններու, մրցակցութեան, արհամարհանքի, եթէ ոչ՝ թշնամանքի եւ ատելութեան: Ներկայ համամիութենական շարժումին մեծագոյն կառուցողներէն՝ Աթենադորաս Ա.ի նշանաւոր դարձած սա խօսքերը, ըսուած՝ արեւմուտցի լրագրողի մը, իրականութեան սուր զգայնութիւն մը կը մատնանշեն. «Ինը դարեր մեզ բաժնեցին, ինը տարի չեն կրնար միացնել»¹:

[illegible]

ներուն վարչաձև մը, որ վստահօրէն ո՛չ հաւատքի պահանջ էր, ո՛չ ալ սէրէն կը ներշնչուէր, ինչպէս նաեւ լատինացումի պարագաները՝ որոնց ներմուծումը փորձուած է, երբեմն նաեւ յաջողութեամբ, արեւելեան ծէսերու եւ կարգապահութեան մէջ, դոնէ անոնց՝ որոնք կը միանային Հռոմի՝:

բ) Ինչպէս գերազանցել խոչընդոտները

Այս տուեալներուն դիմաց, եթէ նկատի առնենք թէ արեւելեան քրիստոնէութիւններուն համար, որոնք այնքան ուժեղօրէն փորձուած են ապտուածային նախախնամութեան կողմէ, ծէսը, պաշտամունքը, մանաւանդ թէ նոյնինքն եկեղեցական կազմակերպութիւնը՝ դարերու տեւողութեամբ ամէնէն ամուր ապաստանարանը եղած են փրկելու եւ ապրեցնելու համար, ամէն տեսակ փորձանքներու ընդմէջէն, ո՛չ միայն իրենց հօրենական մշակութային ժառանգութիւնը՝ այլ նոյնինքն քրիստոնեայի անունը, իրենց անվերապահ փարոմը Քրիստոսի, անշուշտ հասկնալի պիտի թուին իրենց վերապահութիւնները նըկատմամբ հռոմէական կաթողիկէութեան:

Այն ատեն ի՞նչպէս կարելի պիտի ըլլայ արմատէն փշրել սառե-րը: Կը խորհինք թէ անհրաժեշտ է աներկդիմի փոփոխութիւն մը՝ կաթողիկէներու, յատկապէս՝ կղերին եւ արեւելեան կաթողիկէ հասարակութիւններու վերաբերումին եւ դիրքին մէջ: Անհրաժեշտ է մանաւանդ որ Կաթողիկէ Եկեղեցիին զանազան տեղական կազմարարները, ըլլա՛յ Արեւելքի թէ Արեւմուտքի մէջ, ապրուած իրականութեան մը վերածեն Վատիկանեան Բ. Ժողովի համամիութենական սկզբունքները: Բայց մեզի այնպէս կը թուի որ, հոգեբանական տեսանկիւնէ, նման փոփոխութիւն մըն ալ առանձին բաւարար պիտի չըլլար եւ պիտի կարօտէր որոշ ժամանակի մը՝ երաշխաւորելու համար՝ թէ խնդրոյ առարկայ է ո՛չ թէ դիւանագիտական հնարք մը, այլ՝ ճշմարիտ եւ անկեղծ համոզում մը: Գուցէ Հռոմէական Եկեղեցիին կարելիութիւններու սահմանին մէջ պիտի ըլլար՝ ներշնչել ուրիշներուն անհրաժեշտ վստահութիւնը իրեն նկատմամբ, եթէ աւելի

3. Ինչ կը վերաբերի միայն Հայերուն՝ ըստ բաւականի ծանօթ են ձախակեր պատահարները, որոնց տեղիք տուած է Միաբանող Եղբայրներէն եւ անոնց հետեւորդներէն ներկայացուած միջոնարական շարժումը. ասոնց դործունէութիւնը կը ձգտէր Հայ Եկեղեցիին, մանաւանդ թէ նոյնինքն հայութեան, դրեթէ ամբողջական լատինացումին: Այս մտայնութիւնը մեզի աւելի մօտիկ ժամանակներու ալ ունեցած է իր հետեւորդները եւ ազդեցութիւնը. տես, օրինակի համար՝ R. AUBERT, *Le Pontificat de Pie IX (1846-1878), Histoire de l'Eglise depuis les origines jusqu'à nos jours*, fondée par A. FLICHE et V. MARTIN, 4^{me}. 21, Bloud et Gay, 1963, էջ 417-419, 557:

եւս յստակէր իր վարդապետական դիրքը՝ Հռոմի Եկեղեցիին ու տեղական Եկեղեցիներուն միջեւ տիրող յարաբերութեան նկատմամբ: Ստուգիւ, մեր կարծիքով, հարցին կորիզը չի կայանար անոր մէջ՝ թէ մեր քրիստոնէական հասարակաց աւանդութիւնը կը ճանչնայ կամ ոչ՝ որոշ առաջնութիւն մը Պետրոսի Աթոռին, այլ կը կայանայ աւելի՝ այդ առաջնութիւնը ըմբռնելու եւ գործադրելու կերպին մէջ, որ պատճառ հանդիսացած է անցեալի անհամաձայնութիւններուն. որովհետեւ այդ ըմբռնումին ու գործելակերպին մէջ՝ Պետրոս, իր եղբայրները Քրիստոսէ անոնց յանձնուած իշխանութեան լիութեան մէջ հաստատելու իր աւետարանական դերով ներկայանալու տեղ, կարծես՝ կը ձգտէր, ընդհակառակն, անոնց դերը փոխարինելու. այսպէս կ'աղքատանար այդ քրիստոսատուր առաջնութեան ներմաց բովանդակութիւնը:

Մեր համեստ կարծիքով, այս հարցերուն վերաբերեալ յստակում մը անհրաժեշտ է ներկայիս՝ իբր նախաքայլ դէպի կատարեալ հաղորդակցութիւն ընդմէջ Արեւելեան եւ Հռոմէական Եկեղեցիներուն. քանի որ նման յստակում մը պիտի նպաստէ փարատելու վերապահութիւններու եւ զգուշութիւններու այն մնացորդները՝ որոնք առաջ կու գան, դժբախտաբար, անցեալի փորձառութիւններէն: Փոխադարձ զնահատանքը, նամանաւանդ վստահութիւնը անխուսափելի պայմանը կը կազմեն՝ ձերբազատուելու այդ փորձառութիւններուն ազդեցութենէն:

Անցեալը մոռնալու եւ միասնաբար Տիրոջ ճամբաները փնտռելու այս փոխադարձ ճիգին մէջ, անշուշտ թէ կը վիճակի անոր՝ որ աւելի մեծն է եւ աւելի զօրաւորը՝ օրինակ ընծայել նաեւ աւելի մեծ խոնարհութեան եւ անձնուրացութեան, ինչպէս դիտել կու տար արդէն շատ ճիշտ կերպով Հովիւի գերազանց տիպար մը՝ Հայերու Կիլիկեան շրջանի Հայրապետներէն Ս. Ներսէս Շնորհալի, որ խոհեմ եռանդով ու ներշնչեալ սիրով առաջ տարաւ Հայ եւ Բիւզանդական Եկեղեցիներուն միջեւ միութեան դատը⁴:

Եթէ այսպէս է ներկայիս համամիութենական հարցին վիճակը՝ պատմական-հոգեբանական-աստուածաբանական գետնի վրայ, կարելի՞ է արդեօք աւելի առաջ երթալ գործնական գետնի վրայ: Յայտ-

4. Տե՛ս ՏՆ. ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ Թուղթ, Պատասխանի առաջի քաղաքի Բազմաբնակ Հռոմի Մամուլի, Վենետիկ 1873, յատկապէս՝ էջ 306-311, 316-318: Շնորհալիի միութենական գործունէութեան մասին՝ հետեւեալ եղբայրացու-թեան կը յանդի Վենետիկի Միթիթարեաններէն Հ. Պօղոս Վ. Անանեան: Հերոսէս, թեան կը յանդի Վենետիկի Միթիթարեաններէն Հ. Պօղոս Վ. Անանեան: Հերոսէս, թեան չկրցաւ վախճանին հասցնել Յոյներու հետ միութիւնը, քանի որ միշտ վաւեր պիտի գտնէր Եկեղեցական միութեան մը հիմնական ուղեցոյցը՝ որ միշտ վաւեր պիտի գտնէր (P. ANANIAN, յօդ. «Narsete IV Kilaetzi», Bibliotheca Sanc-torum, 4^{me}. Թ, սիւն. 753):

Համոզուած ենք որ, երբ անկեղծօրէն որդեգրուին այս եւ ասոնց նման վերաբերումներ, մեծ նպաստ մը բերուած պիտի ըլլայ իրար դեռ աւելի լաւ ճանչնալու, գերազանցելու անցեալէ ժառանգուած որոշ նախապաշարումներ եւ զգայնութիւններ, եւ աւելի յարմար դետին մը պիտի պատրաստուի նաեւ վարդապետական հասկացողութեան մը համար՝ այն չափով որով ատիկա անհրաժեշտ է իրազործելու հաւատքի միութիւնը՝ հիմնուած Քրիստոսի խօսքին վրայ, եւ հոսկ մեծ մասամբ պիտի փարատի աշխարհի աչքէն բաժանումի դայթակղութիւնը՝ եղբայրական սիրոյ ու միութեան այս հարազատ վկայութեամբ:

Կը խորհինք թէ, Առաքելին յորդորին համաձայն, Աստուծոյ Հոգին չտխրեցնելու յարմար հոգեկան միակ տրամադրութիւնը՝ վերստացուած փոխադարձ վստահութեան այս մթնոլորտն է, ուր կը տիրէ խոնարհութեան, ներողամտութեան ու եղբայրսիրութեան հոգին եւ որ հիւսիսը ներշնչումներուն՝ կը բանայ մեր հոգիները անոր սրբարար աղօթքներէն:

«Զի ԵՂԻՑԻՆ ՄԻ... ՍՈՒՐԲ ԱՐԱ ԶՆՈՍԱ ԶՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ ՔՈՎ»

(ՅՈՎՀ. ԺԵ, 11, 17)

Ըլլալու խորհուրդը եզական խորութեամբ մը կը յայտնուի մարդկային գոյութեան մէջ, ուր արմատականօրէն ազատութեան խորհուրդ մը կը դառնայ. այն ազատութեան՝ որ պատմութիւնը կը ստեղծէ, մնալով հանդերձ իր գերանցական դիրքին մէջ պատմութեան նկատմամբ, եւ կ'որոշադրէ անոր յեղաշրջումն ու իմաստը: Ազատութեան խորհուրդ մըն է նաեւ Եկեղեցիին խորհուրդը. ազատութիւնը Աստուծոյ Հոգիին՝ որ «կը փչէ ուր, երբ եւ ինչպէս կ'ուզէ»⁷, եւ ազատութիւնը մարդուն՝ որ մէկ կողմէ սրբութեան ճանձններով կը փայլի եւ միւս կողմէ անդունդի մինչեւ յատակը կը գահավիժի՝ իբրեւ խորհուրդ Տնօրէնութեան:

ա) Բաժանումի արմատները

Դժբախտաբար, Եկեղեցիին ա'յս վերջին երեսակն է՝ այնքան թանձր ու մռայլ, զոր կը պարզէ մեղի անոր հերձատած տեսքը՝ դա-

Orthodoxe du Patriarcat œcuménique de Chambésy et le Secrétariat pour l'Unité des Chrétiens (Vienne, 1-7 Avril 1974), Istina - Paris, 1975. Այս խօսակցութիւններուն Հայաստանեայց Առաք. Եկեղեցւոյ կողմէ իբր դիտորդ մասնակցած է Վիեննայի Հայոց Հոգեւոր Հովիւ՝ Դոկտ. Հ. Մեսրոպ Մ. Վ. Գրիգորեան (տե՛ս ամօ, էջ 7):

Գ. Համբարձի է. աւուր Պենտեկոստէին:

րերու հատուածական պառակտումներէն, կիրքի պայքարներէն, յաճախ արուեստական տարակարծութիւններէն:

Այս եղած է գուցէ ամենածանր մեղքերէն մէկը մարդուն. պատուոտելը՝ Քրիստոսի անկարկատ պատմութեանը: Անշուշտ հոս չէ յարմար վայրը՝ խորանալու համար այս կացութեան պատմական պատճառներուն պրպտումին մէջ: Սակայն, կրնանք հաստատել անվարան թէ ատոր արմատն է ամբարտաւանութիւնը. այն ամբարտաւանութիւնը՝ որ բոյն դրած է ամենաթաքուն ծալքերուն մէջ մարդկային հոգիին: Ամբարտաւանութիւն՝ որով մենք մեղ գերազանց կը դասենք մեր եղբայրներէն, մեղ սեպականատէրերը կը կարծենք ամէնէն ուղիղ պատճառաբանութիւններու գաղտնիքին, մանաւանդ թէ աւանդապահները՝ նոյնինքն բացարձակ ճշմարտութեան. որով երբեք նկատի չենք առնել մարդկային անխուսափելի սահմանափակումը՝ նաեւ լաւագոյն հոգիներուն ու հաստատութիւններուն, մանաւանդ թէ նոյնինքն Եկեղեցիին կազմակերպութեան մէջ. եւ որով կը յանձնուին հոսկ մոլեռանդութեան զայրադնումներուն (paroxysme): Ս. Հոգիին դէմ գործուած մեղք մը չէ՞ արդեօք ասիկա. այն Հոգիին՝ որ միութեան, սիրոյ, խաղաղութեան Հոգին է իր էութեամբ:

Իրողութիւնը թէ Եկեղեցին իր երկհազարամեայ պատմութեան ընթացքին զերծ մնացած չէ մարդկային այս ձախաւեր կիրքէն, անկասկած, խորհուրդ մըն է մարդու համար՝ երբ կը հաւատայ Քրիստոսի խօսքին, որուն գերադոյն բաղձանքը եղած էր տեսնել իր աշակերտները միացած՝ ինչպէս միացած են անճառելիօրէն ինքը եւ Հայրը (Յովհ. ԺԵ, 11): Արդարեւ, նոյնինքն քրիստոնէութեան իսկութիւնը կը կաղմէ մշտատեւ պահանջը՝ իր հետեւորդներուն միջեւ միութեան, սնած՝ կենդանի բոցովը այն սիրոյն, որով Սաչին վրայ ինքզինքը կը զոհէ Քրիստոս՝ մարդոց, իր եղբայրներուն, սիրոյն:

Ուստի, հանդիսաւոր աղբարարութիւնը հեթանոսներու Առաքելին՝ որ կ'երդուընցէ իր հաւատացեալները հաստատուն պահելու հոգիին միութիւնը խաղաղութեամբ զօդով (Եփես. Դ, 3), ուրիշ բան չէ բայց եթէ աւելի խտացած մէկ արտայայտութիւնը Քրիստոսի կրօնքին հիմնական պահանջին:

Քրիստոնեաներու բաժանումի վիճակը կը ներկայացնէ, ուրեմն, ինչպէս կ'ընդունի նաեւ Վատիկանեան Բ. Ժողովը, գայթակղութիւն մը՝ զոր պէտք է արմատախիլ ընել⁸:

8. Ժողովական վճռադիր՝ Համամիութիւն. «Միութեան վերահաստատումը» (Unitatis Redintegratio), հմ. 1:

բ) Մեր պատասխանատվության բաժինը

Մենք որ կ'ապրինք դարաշրջանի մը մէջ, զոր կարելի է համա-
միութենական կոչել, կրնայինք թերեւս մենք մեզ աւելի բախտաւոր
նկատել՝ քան մեր հայրերը: Բայց ասիկա ճիշտ է միայն որոշ չա-
փով: Պէտք է խաբել ինքզինքնիս: Մինչեւ որ կը շարունակուի
բաժանումի եւ անդամատութեան ներկայ վիճակը՝ հեռու ենք Գրիս-
տոսի դադարաւականէն: Մանաւանդ թէ, առանց յոռետես ըլլալու,
կը խորհիմ թէ հաշտութեան ճամբուն վրայ մինչեւ այսօր նետուած
քայլերը շատ անհամապատասխան կը մնան ոչ միայն միութեան նը-
կատմամբ քրիստոնէութեան ներքին պահանջին, այլ նաեւ միշտ ա-
ւելի հարկադրիչ դրդումներուն ներկայ աշխարհի՝ որ, բազմադի-
ման եւ յաճախ անլուծանելի հակադրութիւններու թռչուածքին մէջ
անգամ, օրէ օր աւելի սուր գիտակցութիւն մը կը ստանայ խաղա-
ղութեան եւ միութեան իր անխուսափելի պահանջին: Եւ ճիշտ հոս
է որ քրիստոնէական պատգամին առջեւ կը բացուի շատ կարեւոր
դժնակ մը՝ թափանցելու համար աշխարհի մը մէջ, որ աւելի վե-
րապահ է քան թէ բաց իրեն նկատմամբ: Ու ճիշտ այս պատճառով
մեր ակնհայտներուն իբր ահազանդի կանչեր պէտք էին հնչել քննա-
դատութիւնները՝ Եկեղեցւոյ օտար մարդերու, որոնց իբր նմոյշ կըր-
նայ ծառայել պոռտապական հեղինակի մը սա խճրճող երգիծանքը.
«Անգլիոյ Եկեղեցին եւ Հռոմի Եկեղեցին կը համարին թէ խոշոր յաղ-
թանակ մը իրագործած են՝ երբ կրնան պարզապէս իրարու հետ քա-
ղաքավարութեամբ խօսիլ»: Դատաստան մը՝ որ իր խայթող պար-
զութեան մէջ՝ բոլորովին հեռու է ճշմարտութեան բաժին մը պա-
րունակելէ:

Ամէն պարագայի օգուտ չունի ողբալ անցեալի սխալներն ու մեղ-
քերը, եթէ չենք խորհիր զանոնք քաւելու ամէնէն դրական եւ ուղ-
ղակի կերպերու մասին:

գ) Միութեան պայմանները

Վախճանը՝ որուն պէտք է ձգտիլ, յայտնի է բոլոր անոնց համար՝
որոնք կը պարծին Գրիստոսի անունով. միութիւնը: Եւ ամէնքս մեր
վրայ կը կրենք վկայութիւնը այս միութեան՝ որ արդէն մասամբ
գոյութիւն ունի մեր միջեւ, մեր՝ որ կը հաւատանք Գրիստոսի մէջ
յայտնուած Աստուծոյ խօսքին, որ մկրտուած ենք յանուն Հօր եւ
Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ ու հաղորդակից ենք միեւնոյն հացին¹⁰:

9. T. LOBSANG RAMPA, Les clés du Nirvana, tr. de l'angl. par F.-M. WATKINS, Paris 1973, էջ 119.

10. Բոլոր քրիստոնէաներուն, եւ յատկապէս կաթողիկէներու եւ արեւելիկներու
հասարակաց տարբերուն գիտակցութեան մասին՝ տե՛ս ՎԱՏԻԿԱՆԵԱՆ Բ. ԺՈ-

Սակայն, ինչպէս կը հաստատէր ժամանակին կարդ. Մոնդինի, միու-
թիւնը միադիմի ներիմացութիւն (concept) մը է: Միութեան զա-
նազան կերպեր եւ աստիճաններ կան¹¹:

Տակաւին այսօր ալ բաւական ծաւալուն կարծիք մըն է թէ քրիս-
տոնեաներու միջեւ կատարեալ միութիւնը կամ հաղորդակցութիւնը
կարելի է խորհիլ՝ բայց եթէ իբր մեկնակէտ ընդունելով դաւանա-
կան (dogmatique) բանաձեւերու կատարեալ նոյնութիւն մը. ինչ որ
կը նշանակէ ըստ ինքեան համաձայնութիւն մը՝ ներիմացային (con-
ceptuel) ու վերացական եզրերու շուրջ, քանի որ դաւանանքները
(dogme) վերացական ներիմացութիւններու միջոցով կ'արտայայ-
տուին: Այս կէտին վրայ պէտք է հարց տալ սակայն՝ թէ արդեօք
կարելի է որ նման համաձայնութիւն մը գոյանայ մարդոց միջեւ,
ու ենթադրելով թէ անգամ մը գոյացած ըլլայ՝ կարենայ տեւական
ըլլալ: Նման բան մը, գոնէ մարդկօրէն նկատուած, գործնականին
մէջ մեղի անհնարին կը թուի. մարդկօրէն կ'ըսենք՝ բաց թողով
հրաշքի մը, այսինքն՝ աստուածային բացառիկ միջամտութեան մը
կարելիութիւնը: Ասիկա կը հաստատուի ոչ միայն փիլիսոփայութեան
բովանդակ պատմութեամբ, այլ նոյնինքն Եկեղեցւոյ պատմութեամբ:
Հոս թոյլ տրուի նաեւ դնել սա հարցը որ, եթէ Տէրը դարբերու տե-
ւողութեամբ չգործեց նման հրաշք մը, յանդգնութիւն է՝ արդեօք
զայն սպասել մեր կամ յաջորդ սերունդներուն համար: Արդեօք ան-
ստոյգ ճամբու մը վրայ չե՞նք Տիրոջ խօսքերուն մեկնաբանութեան
մէջ՝ թէ «Եղիցին մի», զանոնք իւրացնելով դաւանանքի արտայայ-
տութեան ձեւերուն, որ գուցէ այն է՝ ինչ որ այդ խօսքերուն գէթ
գլխաւոր նշանակութիւնը կը կազմէ:

Սխալ չհասկցուինք: Մեր նպատակէն բոլորովին դուրս պիտի
ըլլար՝ թերազնահատել դաւանաբանական բանաձեւումները: Եթէ
աստուածային Նախախնամութիւնը Եկեղեցին առաջնորդեց ժամա-
նակի ու միջոցի այնքան ընդարձակ շրջածիրի մը վրայ՝ բախնդրո-
ւէն արտայայտելու եւ պահպանելու այդ բանաձեւումները, ասիկա
կը նշանակէ թէ ատոնք ունին անկասկած ներքին արժէք մը, որ ա-
ռաջ կու գայ իրենց արտայայտիչ եւ առարկայացնող կրկնակ դերէն:
Դեր մը՝ որ պատմա-մշակութային որոշ միջավայրի մը մէջ, Եկե-
ղեցւոյ համար, վաւեր եւ գուցէ անհրաժեշտ յենարան մը կը կազ-

ՂՈՎ, Դաւանական Սահմանադրութիւն՝ Եկեղեցին. «Ազգերու լոյս» (Lumen
gentium), Գլ. Բ, հմ. 15. Վեոգրի՝ Համամիութիւն: TOMOS AGAPES,
Vatican - Phanar (1958-1970), Rome - Istanbul, 1971. Տե՛ս նաեւ Հ. Փիէթ
Տիւֆրէի վերոյիշեալ յօդուածը՝ Համամիութնական շարժումը վերջին տարի-
ներու ընթացքին, «Բազմ», ՃԼԱ (1973), էջ 480-500:

11. AA. VV., Il problema ecumenico oggi, a cura di C. BOYER, Presenta-
zione del Card. G. B. MONTINI, Brescia 1960, p. IX.

միութեան այս հեռանկարը, փրկիստիայական ըմբռնումներու եւ աստուածաբանական աւանդութիւններու իրական եւ ոչ թէ լոկ բառական բազմատարրութեան (pluralisme) մը մէջ, զերծ՝ բանաձեւային կառոյցներէ, ոչ միայն զգալիօրէն պիտի մեղմացնէր արդար ու բանաւոր հասկացողութեան մը արգելքները, այլ նաեւ պիտի փութացնէր հաւանօրէն նոյնինքն հասկացողութեան յառաջընթացութիւնը: Մանաւանդ թէ շատ մը կէտերու մէջ տրամախօսող կողմերը դիւրաւ պիտի նշմարէին իրենց միջեւ արդէն իսկ գոյութիւն ունեցող հաւատքի հիմնական նոյնութիւնը, ինչպէս վերոյիշեալ համաձայնութիւններու պարագային: Ստուգիւ, բոլորիս հասարակաց չեօն միթէ, գոնէ հիմնականին մէջ, բոլոր այն տարրերը զոր Առաքեալը կը թուէ (Եփես. Դ, 5-6), ճիշտ ցոյց տալու համար թէ բոլորս մէկ մարմին մը կը կազմենք, ու միեւնոյն Հոգին ունինք, քանի որ կանչուած ենք միեւնոյն կոչով մեր միակ յոյսին. Մէկ է Տէրը, մէկ՝ Կառաւորը, մէկ՝ մկրտութիւնը, մէկ բոլորիս Հայրը՝ Աստուած: Ու կը խորհինք թէ շատ յաճախ համամիութենական տրամախօսութիւնը պիտի եզրափակուի վերահաստատելով քրիստոնեաներու միջեւ արդէն իսկ գոյութիւն ունեցող հիմնական միութիւնը: Ուրիշ բառերով, մեր ճիշդ պիտի կայանայ երեւան հանելու մէջ՝ թէ իրարու աւելի միացած ենք իրականին մէջ՝ քան ինչ որ չէինք կարծեր, ինչպէս կ'արտայայտուէր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Վազգէն Ա., Հռոմ տուած իր պաշտօնական այցի ընթացքին, պատասխանելով Կարդ. Վիրապանսի ուղերձին. «Եկեղեցիներու զանազանութեան մէջ՝ մենք կը սկսինք զգալ աստիճանաբար Եկեղեցւոյ մարմինին միութիւնը՝ Քրիստոսի միջոցով, Քրիստոսի մէջ ու Քրիստոսի փառքին համար»¹³:

Այս բոլորին միջեւ՝ կարելի չէ սակայն մոռնալ սա շատ կարեւոր կէտը: Այս ճիշդ, եթէ իբր հիմ կ'ենթադրէ մեր, քրիստոնեաներու, բարի կամքը – որուն անհրաժեշտութեան կը յուսանք թէ բոլոր քրիստոնեաներն ալ համոզուած են այլեւս – անոր յաջողութիւնը կախում ունի նախ եւ առաջ նորարար շունչէն Ս. Հոգիին՝ որ Հոգին է Եկեղեցւոյ, ակնադրելը՝ անոր միութեան, կենսունակութեան ու յաւերժական երիտասարդութեան: Որովհետեւ ինքն է որ կը մեր-

տարինք առաջ՝ Ս. Ներսէս Շնորհալի՝ Թէորեանոսի հետ իր բանակցութիւններու ընթացքին, աստուածաբանօրէն բարձրագոյն արտայայտութիւնը տալով ժամանակները կանխող իր համամիութենական ոգիին. որքան պանծալի՝ նոյնքան եւս յուսադրիչ եւ սփոփարար նախընթաց մը՝ Հայ Եկեղեցւոյ նաեւ մերօրեայ համամիութենական մերձեցումներուն համար:

13. «Dans la diversité des Eglises, nous commençons à sentir graduellement l'unité du corps de l'Eglise par le Christ, dans le Christ et pour la gloire du Christ» («Հռոմէկայ», ամդ):

գործէ մեր մէջ, իր ծրագիրներուն համաձայն, թէ՛ ուզելը եւ թէ՛ ընկելը: Ուրեմն մեր գլխաւոր պարտականութիւնը պիտի ըլլայ աղօթել Ս. Հոգիին, որպէսզի լուսաւորէ մեր միտքերը, զօրացնէ կամքերը, եւ արծարծէ մեր Հոգիներուն մէջ աստուածային սիրոյ կրակը: Որովհետեւ, ինչպէս կը հաստատէ խոհականօրէն Թուրքիոյ Հայոց Պատրիարք՝ Ն. Ամենապատիւ Տէրութիւն Շնորհք Արք. Գալուստեան, «որքան ատեն Հոգիի նոյնութիւն կայ քրիստոնեայ անհատներու եւ հաւաքականութիւններու մէջ, գաղափարի տարբերութիւններ եթէ ծնին անգամ, անկարելի է հասկացողութեան ջգալը: Նոյն Հոգին տարբեր տարբեր գաղափարներ չի կրնար ներշնչել քրիստոնէական զանազան հաստուածներու մէջ»¹⁴:

Այս մաղթանքով, որ կը բարձրանայ մեր սրտին խորերէն, թոյլ տրուի մեզի եզրափակել այս ամփոփ անդադարձութիւնները, մե'րն ընելով այն աղօթքը որով կը փակէր իր Ատենաբանութիւնը՝ Հայ Եկեղեցիին քրիստոնէութեան ընծայած ամէնէն վսեմ դէմքերէն՝ համամիութենական լայն ու ժամանակները կանխող տեսութիւններով, քրիստոնեաներու միութեան Առաքեալ՝ Ս. Ներսէս Լամբրոնացի, ժամանակակիցներէն Տարսնեան Երկրորդ Փողը վերակոչուած. ահա՛ իր մաղթանքը աղօթանուէր.

«Մաղթեսցուի այսուհետեւ, զի տացէ Տէր գեաղցրութիւն եւս առաւելապէս, եւ անեցուցէ յերկիր մեր ցօղով Հոգւոյն Սրբոյ գայս սերմն. թերեւս զօրութեամբ մտրա եւ գպտուզն կարացուի տալ, որպէս կամօք այսօր՝ եւ յառաջի ժամանակս արդեամբք մտրոգել զխաղաղութիւն Եկեղեցւոյ Քրիստոսի: Զի եւ ընդ մեա մտրին շնորհիւն լիցուի խաղաղարարս արդիք Աստուծոյ Հօր անվախճան խաղաղութեամբ, արժանաւորապէս փառաւորել զՀայր եւ գորդի եւ գաւորք չնգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեանից. Ամեն»¹⁵:

Հ. ԼԵՒՈՆ ԶԵՔԻՆ

14. ՇՆՈՐՀԳ ԱՐՔ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, Գումագեղ կիրակիմբի եւ Հոգեգալուստ, Իսթանպուլ, 1972, էջ 58:

15. ՏՆ. ՆԵՐՍԵՍԻ. ԼԱՄԲՐՈՆԱՅԻՈՅ Ատենաբանութիւն, Վենետիկ, 1838, էջ 202: